ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/69» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «22» 08. 2017թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Հ.Մելիքյան (ԳԱՊ),
ՀՀ ՊՆ 41548 զորամասի հրամանատար, մայոր Ա. Միրաքյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Տ.Հարոյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Ա. Հակոբյան,
Բացակայում է՝
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյանը:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀՇ 2-րդ դասի խորհրդական Գ. Տերյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/69» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Տերյան)

1.Մասնակցի՝ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

2. « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/69» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Գ. Տերյան)

1.1 «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/69» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են: Մասնակցի կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերում բացակայում են հրավերող նախատեսված և տեխնիկական բնութագրերի մաս կազմող ծանոթություն դաշտը, ինչպես նաև ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ներկայացրած տեխնիկական բնութագրում նշված է <նոսրացման տևողությունը 25 գ-ի դեպքում մինչև 15-16 վարկյան>, այնինչ պետք է հստակ լինի մինչև 15 վարկյան թե 16 վարկյան, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և ծանուցել մասնակցին շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում մասնակիցը շտկել է անհամապատասխանությունը: Քանի որ 3-րդ չափաբաժնի մասով մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը տարբերվում է հրավերով սահմանված տեխնիկական բնութագրից անհրաժեշտություն է առաջացել ներկայացնել մասնագիտական եզրակացություն: 28.08.2017թ. մուտք 514/2460 գրությամբ ներկայացվել է մասնագիտական եզրակացություն համաձայն որի «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ 3-րդ չափաբաժնով ներկայացրած ապրանքի տեխնիկական բնութագրերը համարժեք է հրավերի պահանջներին, իսկ մանացած չափաբաժինների ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Քանի որ 14.08.2017թ. ստացվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացությունը՝ հանձնաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/69» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակից և վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/69» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/69» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին.

(Գ. Տերյան)

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/69» ծածկագրով ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 1100-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող		Հ.Մելիքյան
Գնահատող		Ա. Միրաքյան
Գնահատող		Տ.Հարոյան
Գնահատող		Ա. Հակոբյան
Գնումները հանձնարարող՝		Գ. Տերյան